«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ստեղծագործական կարողության զարգացումը գրավոր աշխատանքի միջոցով

Հետազոտող ուսուցիչ՝ Ալինա Նազարյան

Մայիսյանի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Հասմիկ Պողոսյան

ԱՐՄԱՎԻՐ-2023

Նախաբան

Դպրոցական տարիքը շատ կարևոր է անձի ձևավորման և զարգացման գործում: Դպրոցահասակ երեխաները մուտք են գործում նոր միջավայր, ձեռք են բերում ընկերներ, ծնողների կողքին ձևավորվում են նոր հեղինակություններ՝ ուսուցիչները, սկսում են նորովի ճանաչել և բացահայտել շրջակա աշխարհը:

Անձի կատարելագործումն ու զարգացումը առաջ է բերում մի շարք խնդիրներ: Դրանց ուսումնասիրումն ու լուծման տարբերակներ առաջարկելը կարևոր է ու անհրաժեշտ:

Այդ խնդիրներից է նաև ստեղծագործական կարողության զարգացումը, որի ուսումնասիրությունն ու կատարված եզրահանգումները կօգնեն ունենալ տարբերվող անհատներ, որոնք կկարողանան արտահայտել սեփական կարծիքը, կկատարեն տարբերվող հարցադրումներ, կստանան յուրօրինակ պատասխաններ: Վիգոտսկին գտնում է, որ մարդու վարքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երկու դրսևորում ունի: Առաջինի ժամանակ մարդը դրսևորում է արդեն ստեղծված և կատարելագործված վարքագիծ, իսկ երկրորդի ժամանակ ինքն է դրսևորում ստեղծագործական կարողություն : (Выготский Л., Воображение и творчество в детском возрасте, ст. 1-2

Երեխաները անհատներ են, որոնք շփվում են մեծ աշխարհի հետ՝ վերցնելով թե լավը, թե՛ վատը: Շրջակա միջավայրը իր ազդեցությունն է թողնում երեխայի վրա: Հենց այց ստացած տպավորություններն էլ զարգացնում են ստեղծագործական կարողությունները: Սակայն պետք է հիշել, որ երեխաներից շատերը օժտված են բնատուր տաղանդով: Երեխայի ստեղծագորխական տաղանդը բացահայտելը ոչ միշտ է դյուրին ու ինքնաբերաբար: Դպրոցահասակ երեխան նոր միջավայրում, նոր մարդկանց շնորհիվ է բացահայտում իր ունակությունը: Այս կարևոր գործում մեծ է նաև ուսուցչի դերը:

Այսօր աշխարհում ինֆորմացիան արագ հասանելի է, կյանքը թվայնացված է, ռոբոտացված: Ցանկացած տեղեկություն, որ անհրաժեշտ է դպրոցականին, հեշտ հասանելի է: Հենց հասանելիությունը, ինֆորմացիայի արտահոսքը, ամենուրեք ինտերնետի ներկայությունը աշակերտներին հեռացնում են երազելուց, պատկերացնելուց ու երևակայելուց: Չէ՞ որ յուրաքանչյուր հարցի պատասխան կարելի է գտնել վայրկյանների ընթացքում, յուրաքանչյուր բարդ կամ մատչելի առաջադրանք կարելի է արտագրել համացանցից: Աշակերտը գիրք կարդալու, հերոսներին մտքում կերտելու փոխարեն լսում է աուդիո և սեղմ տարբերակը, շարադրություն գրելիս չի փակում աչքերն ու երազում, չի առանձնանում, որ զարթնի միտքը, այլ գրում է հանձնարարված թեմայի վերնագիրը ու ընտրում բազում տարբերակներից ցանկացածը: Երեխան դադարում է ստեղծագործել, դադարում է դրսևորել իր յուրօրինակությունը, դառնում է բոլորի նման:

Այդ է պատճառը, որ այօր ամենաթանկը նոր գաղափարն է, ստեղծագործական միտքը: Մեր՝ ուսուցիչներիս խնդիրն է դասապրոցեսի, առօրյա շփման, դպրոցական միջոցառումների ընթացքում զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները: Քաղաքակրթության մակարդակը ստեղծագործ անհատներն են որոշում, ստեղծում են նյութական և հոգևոր արժեքներ, մարդկանց սովորեցնում են անգամ հասարակ թվացող երևույթներում գտնել յուրօրինակություն:

Մեր նպատակն է այս աշխատանքի միջոցով ցույց տալ, թե ինչպես կարելի է ճիշտ մեթոդների ընտրությամբ և գրավոր աշխատանքի միջոցով աշակերտների մոտ ձևավորել ու զարգացնել ստեղծագործական կարողությունը:

Գրականության ակնարկ

Ստեղծագործական միտք, ստեղծագործելու կարողություններ ունեն շատերը, բայց դրանք հաճախ բացահայտված չեն, հաճախ էլ կիրառվում են ոչ ճիշտ: Ուստի անհրաժեշտ է հիշել, որ ստեղծագործական գործունեությունը ծնում է նոր արժեքներ: Եթե մարդը կրկնի միայն եղածը, նա կձգտի անցյալին: Հենց ստեղծագործական կարողությունն է մարդուն մղում դեպի ապագա: (Выготский Л., Воображение и творчество в детском возрасте, ст. 3)

Ստեղծագործելիս մարդը կարծես կտրվում է իրականությունից, ընկնում է երևակայական աշխարհ: Որքան էլ ստեղծագործական ու իրական աշխարհները տարբեր են իրարից, այնքան էլ կապված են իրար: Այդ կապի մասին խոսել է Վիգոտսկին՝ նշելով, որ երևակայությունը միշտ կառուցվում է իրականությունից վերցված տարրերից: (Выготский Л., Воображение и творчество в детском возрасте, ст. 6)

Երեխան, ով ստեղծագործելու խնդրի առաջ է կանգնած, օգնություն է ստանում շրջակա միջավայրից, իր կենսափորձից, կյանքի մասին ունեցած իր պատկերացումներից: Վիգոտսկին գտնում է, որ որքան հարուստ է փորձը, այնքան հարուստ պետք է լինի երևակայությունը: (Выготский Л., Воображение и творчество в детском возрасте, ст. 7)Երեխայի ստեղծագործական երևակայության զարգացման համար անհրաժեշտ է ընդլայնել նրա փորձը:

Հոգեբան Դավիդովը գտնում է, որ ստեղծագործելով արտացոլվում է մարդու ներաշխարհը, նրա ապրումները, հույսերը, ձգտումները: Ստեղծագործական կարողությունը մանկական տարիքի բնական ու մշտական ուղեկիցն է (В.В. Давыдов,Теория развивающего обучения, 1996, ст. 47):

Մեկ այլ գիտնական՝ Իլյին, ստեղծագործական կարողության ուսումնասիրման սկզբում այն կապում էր հոգեկանի անգիտակից աշխատանքի՝ ինտուիցիայի հետ: Այս մոտեցումը գոյություն ունի շատ ուսմունքներում, անգամ կա կարծիք, որ առանց

անգիտակից ստեղծագործական կարողության հնարավոր չէ (Е.П. Ильин, Психология творчество, креативности, одаренности, ст. 61): Նա առանձնացնում էր անգիտակից կարողության երեք տեսակ՝ հետգիտակցություն ենթագիտակցություն, նախագիտակցություն (Е.П. Ильин, Психология творчество, креативности, одаренности, ст. 64): Իլինը ինտուիցիան համարում է ստեղծագործական գործընթացի <<կարևոր աստղը>>:

Հոգեբան Նեմովը ևս անդրադարձել է ստեղծագործական կարողությանը: Նա նշում է, որ կա կարողության մի տեսակ, որից կախված է ուսումը և որի զարգացմանը պետք է ուշադրություն դարձնել նախադպրոցական տարիքում: Դրանք շարժողական ընդունակություններն են ՝ հմտություններ և կարողություններ (Р. Немов, Психология, Книга 2, Психологи образования, Владос, 2007, ст. 84): Նա գտնում էր, որ երեխայի մոտ ստեղծագործական կարողությունները զարգանում են խաղի, նկարչության, ծեփագործության, որևէ երաժշտական գործիք նվագելու ընթացքում: << Մանկական երևակայության զարգացման սկիզբը կապված է վաղ մանկության շրջանի ավարտի հետ: Հետագա երևակայությունը զարգանում է խաղերի միջոցով >> (Р. Немов, Психология, Книга 2, Психологи образования, Владос, 2007, ст.76): Նեմովը կարևորել է նաև հաղորդակցման կարողությունը:

Ամերիկացի հոգեբան Ստերբերգը ցույց է տալիս, որ ստեղծագործական գործընթացը հնարավոր է երեք հատուկ մտավոր ունակությունների ներկայությամբ՝ խնդիրը տեսնել նոր լույսի մեջ, խուսափել սովորական մտածելակերպից, վերլուծելու ունակություն,գործնական համատեքստային կարողություն (Р. Стернберг, Практический интеллект , Питер, 2002): Ստեղծագործելու ունակությունը, ըստ Ստեբերգի, ենթադրում է ողջամիտ ռիսկի գնալու ունակություն, խոչընդոտները հաղթահարելու ունակություն, ուրիշի կարծիքին դիմակայելու պատրաստակամություն:

Ստեղծագործական կարողությունների զարգացումը խթանելու համար նպատակահարմար է ընտրել դիտման և զրույցի մեթոդները: Դիտման մեթոդը հետազոտության հնագույն մեթոդ է: Ցանկացած կետազոտության ժամանակ հետազոտողը դիտում է փորձարկվողին, ուսումնասիրում է նրա վարքը, միջավայրը: Դրուժինինը դիտման երկու տեսակ է առանձնացրել՝ սիստեմատիկ (պարբերական) և

ոչ սիստեմատիկ (ոչ պարբերական): Վերջինս անցկացվում է հատուկ պլանով: Նա նաև առանձնացնում է ընդհանուր և ընտրովի դիտում: (Дружинин В. Н., Экспериментальная психология, Питер,ст. 33):

Զրույցը ևս նպատակահարմար է հետազոտության համար, քանի որ այս մեթոդի կիրառությունն օգնում է ի հայտ բերել աշակերտների ինքնարտահայտման, կարծիք հայտնելու, համակարգված խոսելու, մտքերն արտահայտելու հատկանիշներ: Զրույցի կարևորությանը անդրադարձել ՝ Դրուժինինը՝ նշելով, որ հոգեբանության համար այն յուրահատուկ մեթոդ է մարդկանց ուսումնասիրելու համար, քանի որ այլ բնական գիտություններում օբյեկտի և սուբյեկտի հաղորդակցումն ուսումնասիրելը անհնար է : (Дружинин В. Н., Экспериментальная психология, Питер,ст. 35):

Գործնական համատեքստ

Այս հետազոտությունը կատարել եմ Մայիսյանի միջնակարգ դպրոցի վեցերորդդասարանում, որտեղ սովորում է 22աշակերը՝ 11 տղա, 11 աղջիկ:

Հետազոտության ժամանակ ես՝ դիտարկողս, ակտիվ ներգրաված եմ եղել, սակայն ինձ վրա չեմ սևեռել ուշադրություն: Աշակերտները մասնակցել են դասապրոցեսին՝ առանց հասկանալու, որ դիտարկման են ենթարկվում: Այս մոտեցումն օգնել է նրանց ինքնադրսևորվել, չեն կեղծել իրենց վարքը: Սա ներառված դիտարկում էր:

Գիտափորձս ընթացել է մանկավարժական բնականոն գործընթացի ժամանակ: Չեմ ընտրել հատուկ պայմաններ կամ հատուկ տարածք, այլ ուսումնասիրել եմ աշակերտներին դասի ընթացքում իրենց դասասենյակում: Ծանոթ միջավայրը չի կաշկանդել նրանց, այլ նպաստել է գիտափորձի արդյունավետությանը, ուստի այն բնական գիտափորձ է:

Քանի որ դիտարկել մե կոնկրետ դասարան, հետազոտել եմ սովորողների մեկ խումբ ՝ ներառելով բոլոր սովորողներին, ուստի գիտափորձը զծային է:

Դիտարկման ընթացքում ուշադրությունս սևեռել եմ աշակերտների խնդիրներից ամենաընդգծվածին՝ ստեղծագործական կարողությանը, քանի որ հենց այս հատկանիշն ունեցող սովորողներն են ընտրում յուրահատուկ ու ճիշտ մոտեցումներ, ունենում են ձևավորված աշխարհայացք: Այսինքն՝ ըստ ծավալի սա մասնակի դիտարկում էր:

Տվյալ խնդրի ուսումնասիրությունն ու լուծումն պահանջում է որոշակի ժամանակահատված, փոխկապակցված աշխատանք: Ցանկալի արդյունք գրանցելու համար նպատակահարմար էր ընդգրկել մայրենիի դասերն անընդմեջ, կոնկրետ ժամանակահատվածում. դիտարկումն ըստ տևողության մշտական էր:

Ստեղծագործական կարողության զարգացման համար մեթոդի ընտրությունը հարմարեցրել եմ նաև գիտափորձի պայմաններին, դիտարկվողների քանակին: Գիտափորձի ընթացքում կիրառել եմ երկու մեթոդ՝ դիտում և զրույց:

Դիտման մեթոդը նպատակահարմար եմ համարել, քանի որ այն թույլ է տալիս հետազոտողին ընտրել դիտարկման օբյեկտը՝ տալով դրա մասին ամբողջական և իրական պատկերացում: Այս մեթոդը կիրառելի է յուրաքանչյուր հետոզոտական աշխատանքում: Այն մեծ կարևորություն ունի երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելիս: Դիտողն իրեն անհրաժեշտ առանձնահատկության վրա էլ կենտրոնացնում է իր ուշադրությունը՝ փորձելով աննկատ մնալ:

Դիտումն անփոխարինելի մեթոդ է, եթե անհրաժեշտ է հետազոտել բնական վարքն առանց իրավիճակին միջամտելու, երբ պետք է ստանալ կատարվող երևույթի վերաբերյալ ամբողջական պատկեր և արտացոլել անհատների վարքն ամբողջության մեջ: (Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Կառավարման հոգեբանության գործնական ուղեցույց, Երևան, 2018, էջ 6):

Զրույցի մեթոդը սերտ կապված է դիտման մեթոդի հետ: Զրույցը հոգեբանական հոտազոտության ավանդական մեթոդներից մեկն է: Այն մարդկանց առօրյա զրույցներից տարբերվում է հետազոտական նպատակի հստակ գիտակցմամբ և հետազոտական պլանի առկայությամբ:

Զրուցակցի հետ լավ կոնտակտ պահելու համար հետազոտողը պետք է ցույց տա իր հետաքրքրությունը անձի խնդիրների, կարծիքների նկատմամբ: Իր ակտիվ

մասնակցությունը, դրանց նկատմամբ հետաքրքրությունը հետազոտողը կարող է դրսևորել միմիկայով, դիրքով, ժեստերով, ինտոնացիայով, լրացուցիչ հարցերով: Զրույցը միշտ ուղեկցվում է հետազոտվողի վարքը դիտելով: Այդ դիտումը տալիս է լրացուցիչ, երբեմն հիմնական տեղեկություն զրուցակցի մասին, բացահայտում խոսակցության առարկայի նկատմամբ վերաբերմունքը: (Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Կառավարման հոգեբանության գործնական ուղեցույց, Երևան, 2018, էջ 17):

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները զուգորդել եմ գրավոր աշխատանքի հետ: Առաջին աշխատանքը հանձնարարել եմ և արդյունքնրի միջոցով կարծիք եմ կազմել խնդրի բարդության մասին, մտածել եմ, թե ինչպիսի աշխատանքի արդյունքում կմեծանա աշակերտների հետաքրքրությունը գրավոր աշխատանքի միջոցով ստեղծագործելու մասին: Երկրորդ և երրորդ գրավոր աշխատանքների միջոցով ստուգել եմ արդյունքը. արդյո՞ք արդյունավետ և նպատակային հետազոտություն եմ կատարել:

Հետազոտության ընթացք

Այս հետազոտությունը կատարվել է Արմավիրի մարզի Մայիսյանի միջնակարգ դպրոցի վեցերորդ դասարանում: Դասարանում սովորողների թիվը 22 է: Հետազոտության նպատակն էր զարգացնել աշակերտների ստեղծագործական միտքը, մտածելու և երևակայելու կարողությունը զարգանել, որի արդյունքում կբարձրանար դասարանի ակտիվության մակարդակը, դասապրոցեսին կմասնակցեին բոլորը՝ հայտնելով կարծիք, միտք կամ տեսակետ:

Հետազոտությունս կատարել են բանավոր, ապա գրավոր խոսքի զարգացման միջոցով: Որպես գրավոր խոսքի տարբերակ ընտրել եմ ստեղծագործական,

բնութագրական շարադրությունը: Հետազոտության ընթացքում կարևորել եմ զրույցը, քննարկումը: Փորձել եմ խթանել աշակերտների խոսքային կարողությունը՝ նրանց մտքերը լսելու, չքննադատելու և չփնովելու, սխալների դեպքում սեփական օրինակով շտկելու միջոցով:

Հետազոտության սկզբում ես դիտարման միջոցով ուսումնասիրել եմ աշակերտների վարքը: Երբ յուրացրել ենք դասը մոր մասին, հանձնարարել եմ գրել ստեղծագործական շարադրություն դասի ժամանակ: Դիտարկան ընթացքում նկատել եմ, որ աշակերտները տարակուսել են, երբ լսել են ինքնուրույն շարադրանքի մասին, սկսել են հարցեր տալ, թե քանի էջ պիտի գրել, ինչպես սկսել շարադրանքը: Քանի որ շարադրությունը ստեղծագործելու, մտքերը ճիշտ ու կապակցված արտահայտելու լավագույն միջոց է, նպատակային է նախապես կատարել քննաչկում, զրուցել տվյալ թեմայի շուրջ, գրել բառակապակցություններ, որոնք կարող են ուղենշային լինել: Քննարկումը սկսել ենք զրույցի միջոցով: Խոսել ենք մոր մասին, նշել հատկանիշներ, բնութագրել մայրերին: Այն հարցին, թե ում բանաստեղծությունները կարող են օգնել մոր մասին խոսելիս, պատասխանել են՝ Շիրազի: Կարդացել ենք Մեր հույսի դուռն է մայրս բանաստեղծությունը, բացատրել յուրաքանչյուր արտահայտության իմաստն ու նշանակությունը, ամենատպավորիչները գրել ենք գրատախտակին:

Անդրադարձել ենք նաև շարադրության կառուցվածքին: Նշել եմ, որ շարադրանքը պետք է ունենա գեղեցիկ նախաբան, որը կարող է նաև բանաստեղծական մեջբերում լինել:

Գրավոր աշխատանքը գրել են ուսուցողական տետրերում: Աշակերտները հարցեր են տվել, փորձել ամփոփել լ մտքերը: Բոլորն աշխատել են, բացի մեկից, ով նոր է տեղափոխել մեր դպրոց և տառաճանաչ չէ: Աշակերտներից մեկը, ով դժվարանում է գրել, դասագրքից էր արտագրել մոր մասին բանաստեղծություն, մյուսն էլ, ով ներառված էր նախորդ տարիներին, իսկ այժմ հատուկ մանկավարժի և հոգեբանի վերահսկողության կենտրոնում է, ևս դասագրքից մի քանի տող է արտագրել: Արդյունքները լավ էին. Աշակերտները իրենք էին հորինել բանաստեղծություններ մոր մասին, բայց պարզունակ բառերով: Շարադրանքում կիրառել էին դասարանում սովորած բառակապակցությունները: Շարադրանքը կարճ էր, աշխատանքները նման էին միմյանց: Շարադրանքները ստուգելուց հետո,ես

դասարանում վերլուծեցի դրանք, անդրադարձա հորինված բանաստեղծություններին, նշեց թերությունները: Կարդացի մի քանի աշխատանք, ցույց տվեցի, որ նույն բառի անընդհատ կրկնությունը հասարակ է դարձնում միտքը: Կարևորեցի գրատախտակին գրված արտահայտությունների կիրառությունը աշակերտների կողմից:

22-ից 10 հորինել էին բանաստեղծություններ մոր մասին, 2-ը՝ մեջբերել Շիրազին, 1, ով գրաճանաչ չէ, տառեր էր գրել իր տետրում, 2՝ արտագրել էին դասագրքից, 7 աշակերտ գրել էին շարադրություն՝ օգտվելով գրատախտակի բառերից:



Հաջորդ դասին խոսեցինք հոր մասին (զույգ ժամ): Երբ քննարկեցինք բանավոր նյութը, նշեցի, որ այս թեմայով ևս պետք է շարադրանք գրել: Ինչպես նախորդ անգամ, այս անգամ էլ կատրեցի դիտում և նկատեցի, որ այն աշակերտները, որոնց գովաբանել էի նախորդ դասին, ինքնավստահ էին, պատրաստ աշխատանքին: Այն աշակերտները, որոնք մտքերը արտահայտելու և շարադրելու դժվարություն ունեին, խուսափում էին աշխատանքից: Երբ սկսեցինք քննարկումը զրույցի միջոցով, աշակերտները մեծ ոգևորությամբ մասնակցում էին, նշում հատկանիշներ՝ փորձելով խուսափել պարզունակ բառերից: Երկու աշակերտները, որոնք նախորդ դասին օգտել էին դասագրքից, ինքնակամ ձեռք բարձրացրեցին, նշեցին, թե ինչպիսին է իրենց հայրը: Աղջիկ, ով տառաճանաչ չի, դժվարացավ որևէ հատկանիշ նշել: Աշակերտները

հորը բնութագրելիս փորձում էին մորը բնութագրող արտահայտություններից օգտվել: Այն աշակերտները, որոնք արագ էին կողմնորոշվում, փորձում էին ստեղծագործաբար մոտենալ՝ նշելով հատկանիշը բանաստեղծորեն, փոխաբերական բառեր էին օգտագործում: Դասարանը ակտիվ էր, ոգևորված, բոլորիը մասնակցում էին քննարկմանը: Փորձեցինք միասին նախաբան մտածել: Ստեղծագործական ունակություններ ցուցաբերող մի քանի աշակերտներ նշեցին նախաբանի իրենց տարբերակը (օրինակ՝ Իմ հայրիկ իմ լավագույն ընկերն է: կամ՝ Հայր…Ուժեղ ու հոգատար մարդ,ով միշտ կողքիս է): Աշակերտները չէին վախենում իրենց մտքերն արտահայտել: Նշեցի, որ աշխատանքը տանն են գրելու: Քանի որ դասարանում կան նաև նկարելու շնորհ ունեցողներ, առաջարկեցի նկարել իրենց հայրիկին, քանի որ նկարի միջոցով կարող էին ինքնարատահայտվել:

Հաջորդ դասին աշակերտները մեծ ոգևորությամբ ներկայացրին իրենց աշխատանքները: Կարդացին շարադրանքներից մի քանիսը, ցույց տվեցին նկարները: Շարադրանքները առավել համակարգված էին գրված, ակներև էր, որ աշակերտների մեծ մասը կարողացել էր նախաբան գրել: Չնայած շարադրությունը բնութագրական էր, բայց հոր կերպարը կենդանի ու պատկերավոր դարձնելու համար անհրաժեշտ է նաև ստեղծագործական ունակություն: Հորը նմանեցրել էին արարչի, տան հիմքին, սյանը, լավագույն ընկերոջը, հայրենիքի պաշտպանի: Այն աշակերտները, որոնք բանաստեղծություն գրելու ունակություն ունեն, կարողանում են հանգավորել և իմաստ հաղորդել, գրել էին հորը նվիրված փոքրիկ բանաստեղծություն: Շարադրությունները ինքնաբուխ էին, անկեղծ:

22-ից 10-ը ստեղծագործել էին, բնութագրել հորը, նրանցից 6-ը՝ նկարազարդել, 3՝ հորինել բանաստեղծություններ , 1, ով գրաճանաչ չէ և տանը չեն հետևում դասապատրաստմանը, դպրոց էր եկել անպատրաստ, 2 աշակերտները, որոնցից մեկը դժվարությամբ է գրում, նկարել էր հորն իր պատկերացմամբ, իսկ մյուսը, ով ներառված էր նախորդ տարիներին, բանավոր շարադրանքի միջոցով՝ մի քանի նախադասությամբ, պատմեց հոր մասին: 10 աշակերի շարադրանքում նկատելի էր ծնողների միջամտությունը:

Այս աշխատանքում կար դրական տեղաշարժ:



Երրորդ գրավոր աշխատանքը տատիկի մասին էր: Երբ անցանք բանավոր նյութը, աշակերտները ոգևորությամբ նշեցին, որ ցանկանում են գրել շարադրություն տատիկի մասին: Դիտարկում մեթոդն օգնեց հասկանալ, որ աշակերտների մեծ մասն ինքնավստահ է, պատկերացնում է, թե ինչի մասին է խոսքը: Աշակերտները նշեցին նախաբանի, բնութագրման, համեմատության, թվարկման մասին: Զրույց մեթոդի օգնությամբԵս նշեցի, որ պետք է վերհիշել շարադրություն գրելու կանոնները: Հարցին, թե ինչ բառերով կբնութագրեն տատիկին, աշակերտները շատ գեղեցիկ շարադրեցին մտքերը՝ հեքիաթասաց տատիկ, հյուրասեր, զրուցասեր, առատաձեռն տատիկ,եփող-թափող, մանկան նման միամիտ:

Հանձնարարեցի մաքուր թղթի վրա գրել շարադրությունը: Աշակերտները աշխատում էին սիրով: Երազկոտ ու փայլող աչքերով հարցեր էին տալիս: Երկու աշակերտները, որոնք դժվարանում էին գրել, բանավոր ներկայացրեցին իրենց մտքերը, մի քանի նախադասություն էլ շարադրեցին թղթի վրա. Սա առաջընթաց էր: Անտառաճանաչ աշակերտը մասնիկներ էր գրում տետրում, երբեմն լսում մեր քննարկումները: Մնացած աշակերտները դասի վերջում ինձ հանձնեցին իրենց աշխատանքները:

Ստուգեցի բոլորը, քննարկեցի հաջորդ դասին: Շարադրություններից շատերը հաջող էին գրված:

Պարզ դարձավ, որ 22 աշակերտից մեկը, ով գրաճանաչ չէ, շարունակում էր մասնիկներ գրել, երկու աշակերտները, որոնք դժվարանում էին գրել, մի քանի պարզ նախադասությամբ շարադրել էին մտքերը: Մնացած 19աշակերտները գրել էին շարադրանքն ինքնուրույն: 14 աշակերտ գնահատվեցին 6-9 միավորների շրջանակում, մնացած 7-ը՝ 4-5, քանի որ նրանց շարադրությունների թե՛ ասելիքն էր քիչ, թե՛ բովանդակությունն էր պարզ, չկար ստեղծագործական խոսքին բնորոշ բառապաշար, չկային գեղեցիկ համեմատություններ, յուրահատուկ մտքեր:



Տվյալների մշակում և վերլուծություն

Հետազոտության սկզբում կատարեցի դիտարկում: Ուսումնասիրեցի աշակերտների ստեղծագործական կարողությունները գրավոր աշխատանքի միջոցավ: Առաջին աշխատանքի արդյունքները վերլուծեցի աշակերտների ստեղծագործելու և շարադրելու կարողությունների համեմատությամբ: Պարզ դարձավ, որ աշակերտների 27 տոկոսն է դրսևորել ստեղծագործական կարողություն:

Երկրորդ գրավոր աշխատանքցի առաջ կիրառված դիտում ու զրույց փաստեցին, որ աշակերտները հետաքրքրություն են դրսևորում ստեղծագործական աշխատանքի հանդեպ, բայց անհրաժեշտ է ոգևորել, ցույց տալ ճիշտ աշխատելու եղանակ, ուղղորդել ու աջակցել: Երկրորդ գրավոր աշխատանքը փաստեց, որ ստեղծագործողների թիվը մեծացել էր: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ երկու աշակերտներ, որոնք արտագրում էին գրքից, կարողացել էին ընտրել ստեղծագործելու, աշխատանքային ընթացքին ներգրավվելու իրենց տարբերակը՝ բանավոր տարբերակ, նկար: Ճիշտ է, սա աշխատանքի այլ ձև էր, բայց անհատական էր, իրենա կարողություններին համապատասխան:

Երրորդ գրավոր աշխատանից առաջ կատարված դիտարկումամբ համոզվեցի, որ աշակերտները պատկերացնում էին՝ ինչ է ստեղծագործական աշխատանք, չէին վախենում ինքնարտահայտվել, մտածել, կազմել գեղեցիկ նախադասություն, կարդալ և շտկել սեփական թերությունները: Կարևոր էր, որ բոլորն էին ցանկանում մասնակցել աշխատանքից առաջ տարվող զրույցին, չէին խուսափում կարծիք հայտել, կարողանում էին լսել միմյան, դիմացինի գեղեցիկ գաղափարի նման իրենցն էին կառուցում:



Վերևում տեղադրված գծապատկերից պարզ է դառնում, որ կատարված աշխատանքը արդյունավետ է եղել, քանի որ տարված աշխատանքների արդյունքում մեծացել են աշակերտների ստեղծագործական ունակությունները:

Պետք է փասել, որ ստեղծագործական կարողությունների զարգացմանը պետք է անընդհատ նպաստել, պետք է աշխատել անդադար, քանի որ մարդու միտքը միայն արթուն լինելու դեպքում կարող է մտածել, արարել, ձգտել, կատարելագործվել:

Ստացվածն ամրապնդելու և լավագույն արդյունք գրանցելու համար անհրաժեշտ է աշակերտներին դիտարկել մշտապես, զրուցել, կիրառել այլ մեթոդներ, կազմակերպել հետաքրքիր ու արդյունավետ դասեր, որոնց օգնությամբ աշակերտները կսիրեն դպրոցը, կսիրեն մտածել, երազել, խոսել, պատկերացնել, լսել ու օճանդակել միմյանց:

Ամփոփում

Այս աշխատանքի նպատակն էր ցույց տալ, թե ինչպես կարելի է ճիշտ մեթոդների ընտրությամբ և գրավոր աշխատանքի միջոցով աշակերտների մոտ ձևավորել ու զարգացնել ստեղծագործական կարողությունը:

Նպատակին հասնելու համար ընտրվել է թիրախային խումբ, ուսումնասիրվել է խնդիրը, ընտրվել են համապատասխան մեթոդներ: Աշխատանքը պայմանականորեն բաժանվել է երեք խմբի. նախնական դիտարկում, արդյունքների ստուգում, աշխատանքի ամփոփում: Կատարված հետազոտությունը մասնակցել են բոլոր աշակերտները, դիտարվել են և դարձել հետազոտության մասնակից՝ առանց դրա մասին իմանալու:

Հետազոտության ընթացքը փաստել են հավելվածում առակա դասալսումները, դասերի վերլուծությունները, դիագրամները, աշխատանքների նմուշները:

Աշխատանքի արդյունքները դրական են: Կարելի է եզրակացնել, որ ընտրված մեթոդները ու առաջադրանքները նպատակային են եղել, տվյալ խմբում օգնել են դրական տեղաշարժ գրանցել: Դիագրամները փաստում են, որ սկզբում ունենալով տոկոս ստեղծագործական կարողություն, հասել ենք տոկոսի: Այս դրական տեղաշարժը պարտավորեցնող է, քանի որ անհրաժեշտ է չսահմանափակվել կատարած աշխատանքով, չգոհանալ ստացված արդյունքներով, շարունակել որոնումները, բարձրացնել նշաձողը՝ նոր դրական տեղաշարժեր գրանցելու համար:

Երեխան անգիր թուղթ է, որի վրա իր ձեռագիրն է թողնում նաև ուսուցիչը: Պետք է ջանալ ու չտրտնջալ, ունենալ պատասխանատվության բարձր զգացում՝ երեխաներն կրթելու և դաստիարակելու պատասխանատու գործում: Յուրաքանչյուր խնդիր կարելի է լուծել, եթե ներդնենք սեր ու նվիրվածություն, եթե մենք էլ այդ խնդրին վերաբերվենք ստեղծագործաբար:

Կարելի է եզրակացնել, որ ստեղծագործական կարողությունը անչափ կարևոր է աշխարհում մեր յուրօրինակ խոսքն ասելու, մեր առանձնահատուկ տեղն ունենալու համար:

Գրականության ցանկ

- Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Կառավարման հոգեբանության գործնական ուղեցույց, Երևան, 2018,
- Выготский Л., Воображение и творчество в детском возрасте
- Дружинин В. Н., Экспериментальная психология, Питер
- (Е.П. Ильин, Психология творчество, креативности, одаренности
- Р. Немов, Психология, Книга 2, Психологи образования, Владос, 2007
- Р. Стернберг, Практический интеллект , Питер, 2002
- В.В. Давыдов,Теория развивающего обучения, 1996,

Հավելված

Դասապլան

Ուսուցիչ՝ Ա. Նազարյան Առարկա՝ մայրենի Դասարան՝ 6 Ամսաթիվ՝

Թեմա՝	Հովհաննես Շիրազ <<Մայրս փոքրիկ, մայրս խեղճ>
Օգտագործվող նյութեր՝	Շիրազի <<Հուշարձան մայրիկիս>> ժողովածուն, մոր նկարը:
Հիմնական հասկացություններ	Գաղափարային բովանդակության ընկալում, բանաստեղծության միջոցով մոր գովերգում:
Դասի նպատակը՝	Առոգանությամբ անգիր ասել բանաստեղծությունը, Բնութագրել մորը Արժևորել մորը
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա. • Նկարագրել մորը, • Թվարկել մորը բնութագրող հատկանիշներ • Համեմատել մորը և արարչին • Վերլուծել բանաստեղծությունը

Գործողու թյուններ (ժամ/ տևողություն)	Պլանավորած ՈւԳռազմավարություններ	Առանցքայինհարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)

5 րոպե 5 րոպե 10 րոպե	Կազմակերպչական պահ: Դասը սկսել <<Մտագրոհ >> մեթոդով : Աշակերտները նշում են մորը բնութագրող հատկանիշներ: Կարդալ բանաստեղծությունը, վերլուծել:	Հաճախումների ստուգում: Ինչպե՞ս կբութագրեք մորը: Ի՞նչ հատկանիշներ կնշեք: Բացատրել, թե ինչպես է
Թեմա՝	Գ. Մահարի <<Իմ տատը>>	հասարակ մայրը դառնում ճրագ արևի դեմ, ինչու է փոքրիկ ու
10 րոպե 15 րոպե	Կատարել լեզվական աշխատանք. Դուրս գրել հոմանիշ բառերը: Նախապես վերհիշել հոմանիշ բառերի սահմանումը: Նախապատրաստվել շարադրության մարմասին:	խեղճ մայրը: Այս մտքերն ընդհանրացնել՝ օրինակ բերելով բոլորիս մայրերին: Որո՞նք են հոմանիշ բառերը: Թվել մի քանի հոմանիշ բառերի օրինակներ: Կազմել պլան: Գրատախտակին գրել բառեր և բառակապակցություններ: Կատարել բանաստեղծական մեջբերումներ:
Գնահատում	Կատարել ձևավորող գնահատում:	միավորային գնահատում:
Տնային հանձնարարություն	Տանը գրել շարադրություն << Մայր>> թեմայով:	

Դասապլան՝ արժեհամակարգի կիրառմամբ Ուսուցիչ՝ Ա. Նազարյան
Առարկա՝ մայրենի, Դասարան՝ 6 ամսաթիվ՝ թ

Օգտագործվող նյութեր՝	Մահարու <<Մանկություն>> վեպը, պաստառ և տեղեկություն Վան քաղաքի մասին	
Գործողություններ (ժամանակ/ռեսուրսներ	Պլանավորած Առանցքային հարցեր Հիմնական գաղափարներ՝ Ուսուցման նպատակներ՝ Ուսուցանման արդյունքներ՝ Գնահատում՝	Ռազմավարություններ Հիմնական ստուգումներ Գաղթ, մայրիկենց տուն
5 րոպե	Կազմակերպչական պահ:	Ներկա- բացակա:
5 րոպե	Կիրառել <<Զրույց>>մեթոդը: Հարցերի միջոցով պարզել, թե ինչ արմատներ ունեն աշակերտների տատիկները:	Արժևորել ընտանեկան միասնությունը, Արժևորել ազգային ավանդույթները Որտե՞ղ է ապրում տատիկդ: Ի՞նչ արմատներ ունի: Կա՞ն աշակերտներ, ում նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանից:
10 րոպե	Հատվածի ընթերցում, դասային աշխատանք:	Աշակերտը կկարողանա. • նկարագրել տատին, • թվարկել Մահարու ընտանիքի անդամներին, • համեմատել Մահարուն մորը և տատին, • վերհանել ազգային ավանդույթները տատի և Մահարու զրույցներից, • ընդգծել ընտանիքի կարևորությունը Մահարու կյանքում, • հիմնավորել սեփական տեսակետը հայրենասիրության մասին: Բացատրել հատվածի կարմիր գրված բառերի իմաստները: Ընթերցել հատվածներ տատի, քրոջ Ադրինեի, Մահարու մասին:
15 րոպե	Լրացուցիչ ընթերցանություն <<Մանկություն>> վեպից:	Պատկերել Մահարուն գաղթից առաջ և հետո՝ օգտագործելով խորհրդանշական պատկերներ և բառեր:
10 րոպե	Խմբային աշխատանք. պաստառի պատրաստում	
Գնահատում	Ձևավորող գնահատում	Կատարել միավորային

գնահատում	
Տնային հանձնարարություն	Կարդալ հատվածը, կատարել բառային աշխատանք: